**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀՐԱՎԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ 05.06.2019թ. ԿՆՔՎԱԾ N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/11 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան 16 օգոստոսի 2019թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կարեն Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԷՅ.ԷՄ.ԵՔՍ. Միկրո» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ներսես Ավդալյանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 05.06.2019թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման և ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված՝ Պայմանագրի «Վճարման ժամանակացույցը» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի Հավելված N 1-ը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***«ԷՅ.ԷՄ.ԵՔՍ. Միկրո» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արեգյան 6/1 |
| Հ/Հ՝ 900011192052 | Հ/Հ՝ 2050022343621001 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 01251365 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Ն. Ավդալյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |



Գ. Մկրտչյան

**Հավելված N 1**
«05» հունիսի 2019թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով պայմանագրի
16 օգոստոսի 2019թ. կնքված N 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | |
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 3021120/503 | Սեղանի համակարգիչներ | 3 225 000 | 3 225 000 | 3 225 000 | 3 225 000 | 3 225 000 | 3 225 000 |
| 2 | 30211200/501 | Դյուրակիր համակարգիչներ | 1 418 000 | 1 418 000 | 1 418 000 | 1 418 000 | 1 418 000 | 1 418 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192052
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փաշայան

(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

***«ԷՅ.ԷՄ.ԵՔՍ. Միկրո» ՍՊԸ***
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աբելյան 6/1
Հ/Հ՝ 2050022343621001
ՀՎՀՀ՝ 01251365
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ն. Ավդալյան

(ստորագրություն)

Կ.Տ.